

ՆՈՐ ՕՐԷՆՔԸ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ

Ոճրագործութեան կատուկ ընաւորութիւնը կողկաստում վաղուց ընդհանուր ուշք է դարձրել իւր վրալ. աւազակութիւնը, սպանութիւնները, հրդեհելը—շատ սովորական երեւոթներ են մեր երկրում: Միւս կողմից քրէական լանցանքների համար դատաստանը ընդհանուր օրէնքների համաձայն՝ չափազանց երկարացնում է գործի քննութիւնը և պահանջում շատ բարդ գործողութիւններ: Ի նկատի ունենալով ալդ հանգամանքները, ներկա հոկտեմբերի 13-ին կապցաւ Բարձրագոյն հրաման, որով կողկասի քաղաքացիական մասի կառավարչապետին իրաւունք է տրւում՝ մինչև երկրում աւազակութեան արմատախիւ լինելը՝ աւազակութեան, մտադրած սպանութեան, ուժով կողոպտելու, հրդեհելու, ապստամբութեան և իշխանութեանը զէնքով դիմադրելու մասին գործերը, ըստ իւր հակեցողութեան՝ ընդհանուր դատաստանական հիմնարկութիւնների փոխանակ լանձնել զինւորական դատարանին, մեղադրւածներին պատերազմական ժամանակի օրէնքներով դատելու համար:

Համեմատած ներկալումս ընդհանուր դատարաններում գործադրուող կանոնների հետ՝ ալժմեան նոր կարգը շատ տարբերում է թէ ն իւթական իրաւունքի և թէ դատավարական (процессуальное право) իրաւունքի նկատմամբ: Մենք մատնանիչ կը լինենք ալդ տարբերութիւններից միայն գլխաւորների վրալ: Ամենաէականը այն է, որ նախ պատիժը խտացնւում է, իսկ միւս կողմից անհամեմատ պարզացնւում է դատավարութիւնը նոյն լանցանքների համար: Ընդհանուր դատարաններում քննելով ալդ գործերը, մեղաւորների պատիժը ամենաշատը լինում է տաժանակիր աշխատանքը: Մինչդեռ զինւորական օրէնքներով նոյն լանցանքների համար պատիժը մահն է (Տես լողած 279, բաժանութիւն IV զինւորական կանոնադրութեան պատիժների մասին, կամ ժողովածու զինւորական որոշումների 1869 թ., մասն VI, գիրք XXII): Նոյն պատիժն է տրւում զինւորական օրէնքներով նաև այն սպանութիւնների համար, որոնք կատարւում են դրդւածութեան դրութեան մէջ եղած ժամանակ (состояние запальчивости), որովհետև կառավարչական սենատի

մեկնարանութեան համաձայն (վճիռ 1870 թ. № 705) գրգռածութիւնը դեռ ևս չի ժխտում նախադիտումը, կանխաւ մտադրած լինելը մէկին սպանելու, ալլ գրգռած գրութեան մէջ սպանելը միայն զխաւարեալ լանցանքի տեսակներից մէկն է ճանաչւում: Սակայն նաև աղղ դէպքի համար գործադրւում է նոյն լողած 279 (վճիռ գլխաւոր զինւորական դատարանի 1880 թ. № 30):

Նոյնպէս հաւասար պատիժ է տրւում (մահման պատիժ) աւազակութեան (разбой) բոլոր տեսակների համար (վճիռ գլխաւոր զինւորական դատարանի 1879 թ. № 303), և ոչ մի խտրութիւն չի դնում գլխաւոր մեղաւորների (заключенные) և երկրորդական մեղաւորների (сообщники) մէջ, մինչդեռ ընդհանուր դատաստանական կարգերով (լողած 1633 պատժական օրէնքների) գլխաւորների և երկրորդականների մէջ խտրութիւն է դնւում:

Ապստամբութեան և դէնքով խլիանութեանը զիմադրելու լանցանքների համար, համաձայն Բարձրագոյն հրամանին կառավարչական սեռատին 9 օգոստ. 1878 (հրաման զինւորական վարչութեան 1878 թ. № 226), մեղաւորները նոյն լողած 279-ին են ենթարկւում, ալսինքն անձնական բոլոր իրաւունքների կորուստին և մահւան պատժի:

Աղղ է տարբերութիւնը ըստ նիւթական իրաւունքի: Եւ նոյնքան մեծ է տարբերութիւնը դատավարութեան կողմից: Դատավարութեան մասին զինւորական օրէնքներով խօսւում է զինւորական-դատաստանական կանոնադրութեան IV բաժանմունքում: Ամենից առաջ նկատենք որ զինւորական դատարանների վճիռները համարւում են վերջնական. բողոք տալ նոցա դէմ ըստ էութեան, ապաւելացրակա՛ն կարգով չի թուլատրւում: մինչդեռ նահանգական դատարանների վճիռների դէմ կարելի է բողոքել դատաստանական պալատին՝ քրէական դատավարութեան կանոնադրութեան 853-րդ լողածի հիման վրայ: Զինւորական դատարանների վճիռների դէմ կարելի է բողոք տալ միայն վճռաբեկութեան (կասացիօնին) կարգով, հետեապէս գործը ինքը ալստեղ նորից չի քննւում մի ալլ ատեանում, ալլ միայն քննւում է թէ որքան կանոնաւոր է վարել գործը զինւորական դատարանը: Իսկ ալղ բանը երկեք չի տեսւում:

Դորա հետ միասին դատավարութեան գործողութիւնը շատ պարզեցրած է և շատ կարճեցրած են նաև ժամանակամիջոցները դատավարական գործողութիւնների համար. օրինակ կասացիա տալու համար տրւած է միայն երկու օր ժամանակամիջոց. վկաների դուրս կանչելը, երբ նոքա դատարանի տեղումը չեն, որպէս նաև դործին տեղեակ անձերի հրաւիրելը՝ կախած է դատարանից, զինւորական օրէնքը ալղ չի պարտաւորացնում: Զինւորական դատարանը ներկայանալու պարտաւորութիւնից ազատւում են բոլոր ալն վկաները, որոնց բնակատեղին հեռու լինե-

վրէ չեն կարող ներկայանալ մի օրում: Քահանայի բացակայութեան դէպքում՝ դատարանի վճռով թուաւորւում է վկաներին հարց ու փորձ անել առանց երդումի ¹⁾:

Ինչպէս վերը նկատեցինք՝ վերը չիշած լանցանքների համար մեղադրւողներին զինւորական դատարանին լանձնելը պարտաւորիչ չէ, ալ կախած է միայն Կովկասի կառավարչապետի բարեհալեցողութիւնից: Բարձր իշխանութեան ալս նոր կարգադրութիւնը անկասկած պէտք է ամենքին մտածել տալ երկրիս բարոյական վիճակի մասին, որը տխուր է: Միմիայն բացառիկ հանգամանքները կարող էին ստիպել բարձր իշխանութեանը ալղպէս վարել: Օրէնքը տրւած է ժամանակաւորապէս՝ մինչև ալն լանցանքների արմատախիլ լինելը մեր երկրում: Պէտք է կարծել, որ արմատախիլ լինելը ալնպէս պիտի հասկացւի, որ ալդ լանցանքները ոչ թէ իսպառ վերանան, ալ միայն դադարեն շատ լաճախ կրկնելուց:

Լ Ո Ւ Ս Ի Ն Ի:

¹⁾ Համ. „Новое Обозр.“ № 3385.